

ՉԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՂԾԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

«Մշակի» թղթակից Ռ. Դրամբյանին տված պատասխանն իսկ համար գանազան կարծիքներ հայտնեցին ինձ բանավոր թե գրավոր: Ոմանք են կարծիքին են, թե չարժեք պատասխանել մի որևէ Դրամբյանի, ոմանք ասում են կարելի էր պատասխանել, բայց առանց կոշտ դարձվածքների ու [էդքան] զայրույթի, որովհետև էդ միևնույն է, թե [թնդանոթով ճնճղուկ ես սպանում] թնդանոթ [ես արձակում] արձակես ճնճղուկի [վրա] դեմ, իսկ ուրիշները հավան են, գտնում են և՛ արդար, և՛ տեղին:

Ես էլ կհամաձայնեի և չէ՞ որ արհամարհել եմ միշտ...

Ես, որովհետև հայ գրող եմ, էս տեսակ դեպքի համար կբերեմ օտար գրողի կարծիք, որ հարգելի [լինեք] լինի հայ մարդու համար: Պուշկինն ասում է. Կրիտիկային կարելի է չպատասխանել, երբ գուտ գրական է հարձակումն և կարող է վնասել միայն գրքի վաճառումին: Բայց չի կարելի ծուլությունից կամ բարեսրտությունից անպատասխան թողնել անձնական վիրավորանքն ու [սուտը] ամբաստանությունը, որ այժմ դժբախտաբար [էքան] սովորական [բան] է դարձած (Пушкин, «Критические заметки»):

Հիրավի, էքան տարում չի պատահած, որ էս [դուրս գամ] պատասխանած լինեմ մի որևէ [էս կամ են] քննադատի, երբ նա չի հավանել իմ էս կամ են գրվածքը կամ թեկուզ ամբողջովին մերժել է իմ գրական կոչումն ու արժանիքը: Ի՞նչ անենք, մարդն էդպես է կարում և կարող է նա լինել ճշմարիտը [ու] ցույց տալ, որ դու ոչ այլ ինչ ես, եթե ոչ մի թյուրիմացություն թե՛ ուրիշների համար, թե՛ քեզ: Իսկ եթե ճշմարիտ բանաստեղծ ես դու, թող հարձակվի, փոշի հանի ինչքան ուզում է [սրա նրա առանց են էլ կարճատես աչքերը կկուրացնի բայց ասած է — վերջի-վերջո]: Վաղուց ասած է — ճամփի փոշին ինչքան էլ վեր կենա, չի կարող սևացնի երկինքը: Վերջապես ամենալավ գրողին էլ նկատողություն <1 անընթե> շատ: Հեյնեն ասում է. Լավ բանաստեղծը նա է, որի 7 գրվածքից մինը լավն է: [Չէ որ հետևաբար] Համ<ենայն>դեպս [երկու դեպքումն էլ] միշտ ավելորդ է և՛ պատասխանը և՛ զայրույթը:

Բայց հայոց մամուլն ու [նրանց] հայ քննադատները ոչ մի միջոցի առջև չգիտեն կանգ առնել, միայն թե «բազմաթիվ ընթերցողները» ուշք դարձնեն իրենց վրա: Նրանք [չեն զգում] չգիտեն, որ մարդիկ կան, որոնց եթե աստված բերան է տվել, նրա համար է տվել, որ հաց ուտեն, ոչ թե [խոսեն բարձր բաներից] գաղափարների քարոզիչ ձևանան կամ գեղարվեստ ու բանաստեղծ քննադատեն. մինչդեռ մենք գրքերի գրքից գիտենք [որ] ասված է, թե [տուր նրանց] պատասխան տուր էդ տեսակներին, որ իրենց մեջ ավելի իմաստուն չկարծեն իրենց, և ես պատասխան չտալու իրավունք չունեի:

Իսկ թե իմ պատասխանն ընչի էր զայրույթով կամ կոշտ [դրա մասին մի քիչ հետո, առայժմ] դրա պատճառը ակնարկել էի, սակայն [շատերը դարձյալ] ոմանք լավ չեն գլխի ընկել և ես այժմ ավելի կպարզեմ, քանի որ տեղն է եկել: Եվ կտեսնեք, որ իմ զայրույթի պատճառը շատ ավելի խորն է ու լուրջ¹, ես մասնավոր դեպք չի բնավ, և ոչ էլ [մի խեղճ ու կրակ] որևէ Դրամբյան:

Երևակայեցեք թե ես մինչև անգամ օգտված լինեի հենց Հայկունու ժողոված ժողովրդական նյութերից, հետո ի՞նչ... [և ոչ էլ Դրամբյանի]: Մի Դրամբյան չի հասկանում, կբացատրեի ու [ամենքն էլ կտեսնեին, որ ես վարվել եմ շատ օրինավոր, և ոչ էլ Դրամբյանի տգիտությունն է պատճառը] նա էլ կհասկանար, նրանից ավելի հասկացող համարված չհասկացողներն էլ:

Անպատկառ է խոսել լ. դրա վրա էլ թափ կտայի ձեռքս և դարձյալ չէի զայրանալ: Մի խոսքով, ոչ թե նրա արածն է ինձ զայրացնում, այլ նրա հոգին, ոչ թե Դրամբյանը, այլ դրամբյանիզմը: Դժբախտաբար ես ճանաչում եմ էդ հոգին»... մեր մարդասեր հոգին [թունավորի]... չար հոգի, որ թույն ունի իր մեջ և միշտ գալիս է «կծու խայթիչ լեզվով» միշտ վնասելու, սպանելու մտքով և որովհետև [ամեն չար ու ամեն չարություն] չարը միշտ կեղծավոր է լինում միաժամանակ և երբեք իր կերպարանքով չի առաջ գալի. սա էլ գալիս է «գրականությունը մաքրելու» խոսքով, «գրականության սիրով»...

¹ քան թե կարծում են շատերը առհասարակ: Հետո կտեսնենք, որ դրա պատճառը ոչ թե մի որևէ խեղճ ու կրակ Դրամբյան է, [որ էսօր ինձ ասում է] այլ էն չար հոգին, որ վաղուց խոսում է ու թունավորում ու պարծենում իր կծու խայթիչ լեզվով և սեր ու հարգանք է կեղծում:

Իսկ եթե մի որևէ գաղտնի դրդում են ունենում, միշտ լինում է ստոր, օրինակ «գումարներ են դիզում...» [փոքրիկ մարդու հոգին էլ մեծ լինի] («Մշակ», №) կամ՝ «եղև ով ուտի, ճմուռն ով»:

Բայց ձայնից իսկույն ճանաչում ես [մարդը գազանը] մարդուկը:

Ինչպե՞ս կարող է պատահել, որ գրականությունը մի քիչ սիրող ու հարգող մարդը թեկուզ նրա ամենահամեստ ներկայացուցչին, էլ չեմ ասում հայտնի դիրք ունեցող մեկին, ինչպես ինքն է [ասում] գրում, հենց առաջին բերանը բաց անելիս, հենց առաջին հարցը տալիս [սկսեր] ծեփեր շանտաժով, ավերիչ ժանտախտով ու բոյկոտով...

[Սակայն ներքևում կանենք էդ դառն ու տխուր խորհրդածությունը մեր մարդու չար հոգու մասին, իսկ] Առայժմ տեսեք, նախասենյակիս մթնում կրքից դողալով ատամները կրճտացնում է [էն] փոքրիկ դեղնած արարածը, իսկ ետևից հրում են չարածպիտ ծանոթ դեմքեր...

Ետ է եկել: Բայց [իր հաստ ու նեղ]... ճակատին կրում է առած հարվածների հետքերը ու ավելի անհամարձակ է էս անգամ, և [էնքան է խեղճացել, որ] մինչև անգամ քաղաքավարի լինելու խոստումն է անում՝ [բաց անում բերանը] «Ես ձեզ էնպես չեմ պատասխանի, ինչպես դուք ինձ...»: Մի ասող լինի՝ հապա որտե՞ղ էր էդ քաղաքավարությունը, երբ գրում էիք ձեր առաջին [բառավիժությունը], «լուրջ կրիտիկան»...

[Վերնագիրը դնում եք «գրական մեծություններ»] ու [սկսում եք] բերանների բաց եք անում շանտաժով ու ավերիչ ժանտախտ<ով>, վերջացնում բոյկոտով:

[Բայց] Սակայն չլինի խաբվեք ու կարծեք, թե էդ մարդը կարող է թեկուզ դիտմամբ, գրագով մի քանի բույեով մարդավարի մնալ. չէ, իսկույն էդ քաղաքավարի> խոստումին հետևում է, թե՛ «Ես ձեր մեջ մարդ արարածը չեմ հարգում», ետևիցն էլ մի «Օ՛, երբեք...»:

Սիրելի Դրամբյանը, ինչպես երբեք, չի դավաճանում ինքն իրեն:

Բայց պատմությունը կուզի իմանալ՝ հապա ի՞նչ է հարգում XX դարի հայոց լուրջ կրիտ<իկոս> Դրամբյանը... Իսկույն ինքն ասում է. «թուղթը... թղթի սրբությունը և «բազմաթիվ ընթերցողներին»... Ա՛խ, ինչպես հրճվում է մարդ, երբ տեսնում է վերջապես խիսունջը դուրս եկավ իր պատյանից: Ո՛վ իմ անկեղծ Դրամբյան, սքանչելի է...

Բայց լսեցեք մի հրաշալի խոստովանություն, ասում է՝ ես էսպես վարվում եմ միայն «բազմաթիվ ընթերցողների» հարգանքից...

Ո՛վ սքանչելի է ձեր էդ խոստովանությունը: [Ես գիտեմ, որ բոլոր ձեզ նմանները միայն մի նպատակ ունեն, որ մտնեն էդ] ոչինչ չեն սիրում, ոչինչ չեն հարգում՝ ո՛չ գրող, ո՛չ գրականություն, և էդ բոլորն ասում են միայն «բազմաթիվ ընթերցողների» համար... Էստեղ դուք անկեղծ եք միանգամայն: Հենց, ես էլ էդ եմ ուզում ապացուցանել, որ դուք և ձեր նմանները հիրավի, ոչինչ չեք սիրում, ոչինչ չեք հարգում, բացի «բազմաթիվ ընթերցողներից» (թուղթը պարապ խոսք է...): [Դուք ամեն] Ո՛վ էդ «բազմաթիվ ընթերցողները...»: Ա՛խ, էդ «բազմաթիվ ընթերցողները» [ինչպես ուրիշ խոսքով ասում եք՝ «ժողովուրդ»], էդ զարհուրելի տարփուհին, որի սիրուն տիրանալու համար էնքան ոչնչություններ անում են ամեն բան իրար ձեռքից խլխլելու համար, [դուք և] ձեզ նման էնքան շատերը դուրս [եք] են գալի [իրենց] փոքրիկ պատենից ու ընկնում [եք] են փոթորիկների առջև, շեղվում [եք] են [իրենց] համեստ ճանապարհից ու գլխի վրա ընկնում զանազան մեծ [ասպարեզներ] հրապարակներ և սխրագործություններ ցույց տալու տենչով հարբած [գլուխներդ] գլուխները փորձանքի [եք] են տալի [և սիրահարված] կանգ [չեք] չեն առնում ոչ մի հիմարության և նույնիսկ ոճիրի առջև, միայն թե [նրա] էդ բազմության առջև ավելի մեծ ու «ողջադ» [երևաք] երևան, քան թե [կաք] կան:

Ահա թե ինչու դուք էլ գավառի մի համեստ անկյունից վեր եք կացել եկել, որ մեղանում «բազմաթիվ ընթերցողների» առջև բոլոր «գրական մեծություններին» միանգամից զարկեք՝ դրա՛մփ, ու մեջտեղը կանգնեք, «ողջադ» Դրամբյան...

Ո՛վ «ղոչաղ» Դրամբյան...

Ո՛վ զարմանալի Դրամբյան:

Եվ ինչպես երջանիկ ու մեծ էիք մի քանի օր...

Եթե ասեմ ես դրանից բան չեմ հասկանում: Իսկ բազմաթիվ ընթերցողնե՞րը...

Սակայն չեք [էլ] ուզում, որ ձեր մեջքը գետնին [տաք] դիպչի, այնուամենայնիվ ու ահա եկել եք կրկին [չափվելու, փորձելու ձեր ուժերը]... ասելու, և ասում եք ձեր «վերջին խոսքը Հովհաննես Թումանյանին»:

[Օ՛, պարոն. մեր մեջ վերջին խոսք լինել չի կարող: Կոնիվը միշտ եղել է ու կլինի, որովհետև մենք տրամագծորեն բոլորովին տարբեր ու ներհակ արարածներ ենք և հակառակորդներ ի ծնե: Ես էլ ձեզ հակառակ, մարդ արարածն եմ հարգում, քան թե «բազմաթիվ ընթերցողներին», և էն, ընչի վրա որ սիրահարված ենք, նա մեր մեջն է ու մեր ամենամեծ հաճույքը բխում է մեր ներսից և ձեռք բերելու համար սխրագործություններ անելու փորձանքին չենք ենթարկված և շատ քիչ ենք հոգում, թե ինչ կասի Мария Алексеевна-ն, մանավանդ որ էդ М. А.-ն շատ է հիմար]:

Ինչ վերաբերում է [ձեր] նրան, որ դուք չեք վիատում ու նորից գալիս եք, խոսք չունեմ ասելու, և պետք է պարծենամ, որ եղպես մի անվեհեր [մարդ] հակառակորդ ունեմ, որ [իսկի] ոչ վախն է հասկանում ինչ բան է, ոչ էլ հասկանալն է հասկանում ինչ բան է: Իսկ գալով նրան, որ դուք ձեր վերջին խոսքն եք ասում, սխալվել եք...

[Օ՛, պարոն Դրամբյան] Պետք է ասեմ, որ ես իմ անցյալ հողվածում [ձեզ անվանել էի անմահ, դուք ինչպես երևում է] թեև մի քիչ տաք, բայց ինչ խոսք որ գործ եմ ածել, ունի իր անկապտելի իրավունքն ու նշանակությունը: Դուք զուր եք կարծում, թե նրանց մեջ կա թեկուզ մի հատ հայհոյական բառ:

Ճշմարիտ, երանի թե մեծ լինեիք, թեկուզ [իբրև] չար լինելով հանդերձ: Մարդու հոգեառն էլ պետք է մեծ լինի, թե չէ գիտե՞ք ինչ բան է, երբ գործ ունեք մի պստիկ ու

տափակ Դրամբ<յանի>> հետ, որի բոլոր ուժը իր տգիտությունն է ու գեղջկական համառությունը:

Ես էնտեղ, ի միջի այլոց, ձեզ անվանել էի նաև անմահ, անվերջ Դրամբյան: Տեսնո՞ւմ եք, դուք էլ մինչև էսօր երևի չեք իմացել, որ դուք էդպես մի մեծ բան եք: Ինչպես երևում է, դուք լավ չեք հասկացել կամ ինձ չեք հավատացել, որ անվերջ եք դուք, և եկել եք ասելու ձեր վերջին խոսքը: Դուք ոչ վերջին խոսք ունեք, ոչ վերջ: Մի՞թե վերջ [ունեն չարությունն ու կեղծավորությունը] ունի չարությունը: Իսկ չարությունը ունի շատ առանձնահատկություններ՝ կեղծավորություն, բթամտություն [համառություն] նախանձ, ստախոսություն և նրանք քեզ ընտրել են իրենց անոթ, համառ, համառ իր ընթացքի մեջ...

Անվերջ կլինեք դուք, անվերջ կլինի ձեր խոսքը, «կծու, խայթիչ լեզվով» միշտ նոր ու նոր գրական «մեծությունների» թունավորելու համար և անվերջ էլ [կգոռան] կմոնչան նրանց [ազնիվ] զայրույթի [տաք] շանթերը ձեր բույթ ու մույթ ճակատների դեմ... Հին կռիվ:

Եվ շատ խեղճ հոգիներ կգարմանան, թե ինչպե՞ս էս բանաստեղծը խոսում է և բերանից երգեր չեն դուրս գալիս, այլ [շանթեր] զայրույթ...

Խե՛ղճ մարդիկ. կարծում են ինչ լեզվով ու ինչ քնքշությամբ բալլադներ ենք գրում, նույն լեզվով ու նույն քնքշությամբ պետք է պատասխանենք իրենց դրամբյանների ու գազեթների չարությանը... [Ո՛չ, դրա համար ուրիշ բարբառ ունենք նրանց ավելի հասկանալի:]

Ահա եկել ենք նորից նույն հին տեղը՝ «Մշակի» №-ում [նորանոր գյուտեր եք արել] նորից ծամծմելու, ինչ որ մի անգամ ծամծմվեց ու մնաց կոկորդում: Շատ լավ. առած կա. քոռամուկը ինչքան հող փորի, իր գլխին կաճի: (Առած, բայց Հայկունուց չեմ առել դարձյալ): Համեցեք:

Ներս համեցեք:

Ի՞նչ պետք է անենք: Մարդը կրիտ<իկոս> է դարձել [ինքն էլ,] <1 անընթ.> դողդողում է իր անզոր կատաղությունից:

Մարդ և՛ զայրանում, և՛ խղճում է միաժամանակ:

— Ի՞նչ եք ուզում, պարոն Դրամբյան, ի՛նչ...

Ասում է՝ ես...

— Լա՛վ, ի՞նչ եք ուզում:

— Ինձ պատասխան պետք է տաք...

— Իհարկե, իհարկե պատասխան պետք է տամ: [Ձեզ չեմ արհամարհիլ]

[Ի՞նչ պետք է անենք] Մարդը կրիտիկոս է դարձել ու փորձանքի մեջ է մնացել ինքն էլ, մենք էլ: Ուշադրություն պետք է դարձնենք, պատասխան պետք է տանք, չէ՞ որ հայ ուսուցիչն է, առաջադիմական թերթի թղթակիցն ու քննադատն է, վերջապես մեր ինտելիգենտն է: Չի կարելի արհամարհել: Ավա՛ղ, [էսպես է] չի կարելի: Մեր եղածն էս է:

— Ի՛նչ եք ուզում, պարոն Դրամբյան, [ինչ...]

Առաջ թե ինչ էր ուզում, հասկանում էի, բայց այժմ ինչ է ուզում, չեմ հասկանում: Առաջ նա գոնե գտել էր, որ ես «բառացի» վերցրել եմ «Ծիտը» Հայկունու ժողովածվից, «Չախչախ թագավորն» ու «Մուկիկն» էլ մի քիչ փոփոխել եմ, դրա համար էլ ինձ անվանում էր և՛ շանտաժիստ, և՛ բանագող, և՛ ավերիչ ժանտախտ, ծերումն էլ՝ բոյկոտ: [Եվ էսպիսով մենք մեղանչել էինք «գրական մեծությունների» դեմ, պատասխանատու էինք հայ ժողովրդի, նրա վարժապետների, կրիտիկոսի և հառաջադիմական մամուլի առջև: Բայց ինչքան էլ մեղադրածներ լինեինք...]

Բայց իմ անունը Հովհաննես Թումանյան է, և ես պատասխան էի տալու էն ամենի համար [ընչի տակին կամ գլխին], ինչ որ կրում է իմ ստորագրությունը:

Եվ [ահա] ես ցույց տվի, որ «Ծիտը» ես Հայկունուց չեմ վերցրել, այլ ես էլ հայ եմ ու գավառցի, զբաղվում եմ հեքիաթներով և ձեռիս տակ էլ ունեցել եմ ահա էսքան վարիանտներ, որոնցից [օգտվել եմ] կազմել եմ, և միառմի ցույց եմ տալի իմ վարիանտում: Ամենայն ուրախությամբ ու իրավունքով, ասում եմ, կօգտվեի և Ս. Հայկունու վարիանտից, բայց նա հետո է ձեռս անցել, չեմ օգտվել, ցույց եմ տալի [տարբերությունը], որ նա մինչև անգամ [ուրիշ] իմից տարբեր վարիանտ է, թվում եմ տարբերությունները, որոնցով վարիանտները ջոկվում են իրարից, թե ինչպես մեկը իր ոտը մտած փուշն է տանում, պառավին ասում, որ հանի, իր թոնիքը վառի, որով իսկապես ինքը ցավից ազատվում է, բայց [նրան] պառավին իբրե թև լավություն է անում ու վրեն մուննաթ է դնում, վերջն էլ գցում փորձանքի մեջ: Իսկ մյուսը միայն իր գտած փուշն է տալի: Կան վարիանտներ, որոնց մեջ հերոսը զոհ է գնում իր ժուլիկությանը, կան, որոնց մեջ մնում է վերջը դատարկ, ինչպես իմ առածը, և կան, որոնց մեջ հաջողում է, հարսի տեր է դառնում, ինչպես Հայկունունը, թեև դրանք բոլորն էլ սկսում են՝ լինում է, չի լինումով, ու մեջները կա՝ գնում է, գնում, և սրանց նման ընդհանուր դարձվածքներ:

Մինը իր հարսը նվիրում է աշուղին ու ինքը դատարկ գնում, որ ետ գա ու շատով տա, իսկ մյուսը իր հարսը ուղղակի փոխում է աշուղի չոնգուրի հետ: Մինը իր արկածները վերջացնում է նրանով, որ մնում է առաջվա նման դատարկ, իսկ մյուսը աշուղի աչքը հանում է ու դառնում է հարսի տեր, և այլն, և այլն: (Տե՛ս «Մշակ», №№):

Ի՞նչ էք կարծում, ինչ պատասխան ստանամ սրան: Ներողություն՞ ւն, սրա համար մի գրողի շառ են արել: Էս ո՞ր աշխարհքումն ենք ապրում: [Ինձ նրա համար բանագող] Խոստովանություն՞ ւն, որ սխալված են: Վա՛հ, մի՞ թե դրամբյանները կարող են սխալվել:

Լռություն՞ ւն, ո՛չ, էդքան էլ խելք չունեն: Այլ ոչ ավել, ոչ պակաս, էս տեսակ բացատրություններ: [Նախ էս իմ ցույց տված տարբերությունները]

— Դրա՞նք են որոշում վարիանտները, հա՞... Դրանց անվանում է «աննշան, ոչ էական տարբերություններ» [և ասում է՝ ես դրա համար «հատկապես ասել էի՝ վերջը մի փոքր

կրճատել է»: Իբրև թե վերջի կամ կրճատելու մասին [է խոսքը] խոսք կա էստեղ ու կրկին հաստատելու համար, որ «բառացի նույնն է», բերում է «էական» նմանությունները:]

[Եվ էս բոլորն] Ընչի՞ է անում, որ արդարացնի, թե ես իրեն զուր չեի բթամիտ անվանել...

[Կարդացեք, ի սեր աստծո:] Եվ բերում է [հետևյալ «էական» նմանությունները] բոլոր վարիանտների եղած սովորական դարձվածքներից:

«Լուսաբեր»

Հայկունի

Լինում է չի լինում մի

Կըլի-չըլի մե այիլոր:

Ծիտ:

Կամ թե չէ՝

Պառավ, առ էտ փյուշ ա,

Նանի՛, Նանի՛, ոտիս

տարմով թյունդիրտ կպու:

փուշը հանի, թոնիրդ վառի:

(և այլն, տես «Մշակ», №)

[Մրան հենց իր [լեզվով] լոգիկայով բռնելու համար ուզում եմ մի խնդիր առաջարկել, որ լուծի, [մի բան] որ իհարկե չեի անիլ ուրիշ] բայց էս տեսակներին հենց իրենց փորած փոսը պետք է գցել, որ հասկանան, թե ինչ են արել: Վճռեցեք, ով խորիմաստ կրիտիկոս, արդյոք «բառացի» չի գողացել Հայկունին իրենից 22 տարի առաջ հրատարակված Գ. Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիզեցոց մտ<ավոր> կյանքից» իր «Աշըղ այիլորը», ինչու, գիտե՞ք, որովհետև էս տեսակ «էական» նմանություններ կան.

«Թիֆլիզ. մտ.կյանքը»

Ծտի վուտի փուշը

Էջ 412

Ըլում է, չի ըլում, մե ծիտ

է ըլում...

Ս.Հայկունի

Աշըղ այիլոր

Կըլի-չըլի, մե այիլոր...

Կամ թե չէ՝

գնում է, գնում ու տափումը տեսնում,
վոր Օջիւրապնիրը աթարը բրթում են
կաթնումը ու մաճնումն ու ուտում ին:

Կամ թե չէ, կուգէք էդպես համեմատեմ [1903] դարձյալ Հայկունուց տարիներ առաջ
լոյս տեսած ինգիլոյական ռուսերեն հեքիաթի հետ (Воробей):

կէթը կը տսնի օր կօ մէ չոբան նստիր ի,
պտըտուրը փրթիր ի կաթի մեջա՝
ուտելի:

Ս. Հայկունի

Պառավը փյուշը կանի, թյունդիրը կը
կպուցի, կը վառի, յուր խացը կը թխի:
Այիլոր կէթը կճեճ կանի, կիկեա,
պառվուն կասի.

[— Պառավ, իմ փյուշը տու, ես էթաս էմ]:

Инг., ск.

Կամ թե չէ՝

Կէթը-կէթը, կը տսնի որ, կօ մէ շյուն
մորթիր են խարսնիս էն անելի, կա-

[-Առէք, էտ ոչխարը մորթէլ,
խարսնիսն արեք...]

Старуха же не подождала воробья и тою
терновою иглою растопила печку и
испекла хлеб.

Воробей же тем временем вернулся и
стал требовать свою иглу.

[— Старуха, где моя игла?]

Много ли, мало ли шел, наконец пришел
в один дом и видит,—там свадьба
в разгаре, но вмес тоскотины, для
угощения гостей закалывают собак.

Тут воробей и говорит хозяйке:

[— На свадебную пиру...]

Կուզեք հիմի մյուս հեքիաթը (որ Լուսաբերինն է) համեմատեմ ձեզ նման:

Հայկունի, 1907թ

Աղվես ու պառավ

— Պառավ՝ պառավ, իմ պոչ տու, կցեմ, կցմցեմ, էթամ խասնեմ իմ ընկերտանքին ընձի չասեն.— «կօլտօմօլտօ յուստէն կուզասս

Գ.

Շերենց,
«Վանա սագ», 1885 թվական
Պառավ ու անձեղ
(կաշաղակ)

Պառավ՝ պառավ, իմ պոչ տու կցեմ, կցմցեմ, էրթամ իմ ընկերներաց խասնեմ, որ չասեն ճէլատ-պօլատ անձեղն էկավ:

Հայկունի

— Գնա՛, կասա, իմ կաթ բի:
— Կո՛վ, կո՛վ, ընձի կաթ տու, տանեմ տամ պառավին, պառավ իմ պոչ տա, կցեմ, կցմցեմ էթամ խասնիմ իմ ընկերտանքին:

— Գնա՛, ընձի խոտ բի:

— Չայիր, չայիր, ընձի խոտ տու, տանեմ տամ կովին, և այլն:

Պառավը կասի՝ կնա իմ կաթ պե... Անձեղ կասի՝ կո՛վ, ձի կաթ տո՛ւ, տանեմ տամ պառվուն, պառավն իմ պոչ տա, կցեմ, կցմցեմ, էրթամ իմ ընկերներաց խասնեմ... Կով կասի՝ կնա՛ ձի խոտ պե՛... — Ա՛ռտ, ա՛ռտ, ձի խոտ տու, տանեմ տամ կովուն, և այլն:

— Ա՛ռտ, ա՛ռտ, ձի խոտ տու, տանեմ տամ կովուն, և այլն:

Կամ թե չէ կուզեք համեմատեցեք Սրվանձոյանի «Համով հոտով» վարիանտին «Անձեղն և յուր պոչիկ», որ հրատարակվել է դարձյալ Հայկունուց շատ տարիներ առաջ.

Հ ա յ կ ու ն ի, էջ 9

— Պառա՛վ, պառա՛վ, իմ պոչ տու, կցեմ, կցմցեմ, էթամ խասնեմ իմ ընկերտանքի՛ն...

— Գնա՛, կասա, իմ կաթ բի:

— Կո՛-կո՛վ, ընձի կաթ տու, տանեմ տամ պառավին, պառավ իմ պոչ տա, կցեմ, կցմցեմ [և այլն նույն կարգով՝] էթամ խասնեմ իմ ընկերտանքին...

— Գնա՛, ընձի խոտ բի:

— Չայի՛ր-չայի՛ր, ընձի խոտ տո՛ւ տանեմ տամ կովին, կովը ընձի կաթ տա, կաթը տանեմ տամ պառավին, պառավ իմ պոչը տա. կցեմ, կցմցեմ, էթամ խասնեմ իմ ընկերտանքին...

— Գնա՛, ընձի ջուր բի:

Սրվանձտյան, էջ 381

— Պառա՛վ, պառա՛վ, իմ պոչ տու, կցեմ, կցմցեմ, էրթամ իմ ընկերներաց հասնեմ:

Պառավնե կ՝ասե. Գնա, իմ կաթ բեր:

— Կովի՛կ, կովի՛կ, ձիկ կաթ տու, տանիմ տամ պառվուն, պառավն իմ պոչ տա, կցեմ, կցմցեմ էրթամ իմ ընկերներաց հասնեմ:

— Գնա ձիկ խոտ բեր:

— Արտի՛կ, արտի՛կ, ձիկ խոտ տու, տանիմ տամ կովուն, կովիկ ձիկ կաթ տա, տանիմ տամ պառվուն, պառավն իմ պոչ տա, կցեմ, կցմցեմ, էրթամ իմ ընկերներաց հասնեմ:

— Գնա՛ ձիկ ջուր բեր:

Ես տեղով ու երեսով ցույց տվի, թե էդ նույն հեքիաթներից քանի-քանի վարիանս տե՛ս ունեցել ձեռիս տակ նախքան Հայկունին ու կազմել եմ նրանցից և միաժամանակ տարբերությունները մեջ բերելով ցույց տվի, որ իմ պատմածն ու Հայկունու գրի առածը մինչև անգամ հակառակ վարիանտներ են: Որ վերջապես [մինչև անգամ] թեև ավելորդ, նշանակել եմ ժողովրդականից [ցույց եմ տվել դարձյալ տեղն ու էջը] «Լուսաբեր», 1907 թ. Ա տարի, էջ 71, հոդված 27 և բացատրել եմ, թե ինչու հետևյալ հրատարակության մեջ հանել եմ («Մշակ» №№):

[Սրան ի՞նչ պատասխան ստանամ, որ լավ լինի] էհ, սրանից հետո հիմի ի՞նչ է ուզում:

[Մինը մյուսից ապշեցնող]

Կարծում եք ներողություն՞ն, որ դրա համար շանտաժիստ է անվանել, ո՛չ, էս ո՞ր աշխարքումն ենք ապրում: Խոստովանություն՞ն, որ սխալվել է. [ո՛չ] դրամբյանները մի՞ թե կսխալվեն: Լռություն՞ն, էդքան էլ խելք չունեն:

Ո՛չ մինը, ո՛չ մյուսը, այլ նորանոր, մինը մյուսից ավելի ապշեցնող սովետություններ, հիմարություններ ու ստեր:

Եվ ասում են էս մարդը ուսուցիչ է: Մարդ ակամայից մտածում է, մի՞ թե սրա նմանները շատ կան մեր ուսուցիչների մեջ...

Տարրական մարդավարությունից գուրկ, տարրական գիտելիքներից բոբիկ:

[Նախ] Իմ ցույց տված թվականը (1907 թ.) խառնում է մյուս տարիների հետ (որ ասել եմ, հանել են) ու աշխարհքովը մին, առանց ամաչելու, հայտարարում է, թե էդպես չի: [Խնդրում եմ] էնպես որ ես ստիպված եմ խնդրելու, եթե ընթերցողներից մի պարապ մարդ կլինի ու ձեռը կընկնի «Լուսաբեր» Ա տարի, 1907 թ. տպագրությունը, թող նայի 96 էջ, 17-րդ տողը, տեսնի արդյոք տպա՞ծ է «Ծիտը» ժողովրդականից, թե՞ չէ: Ես իրեն ասել եմ՝ իմ ծիտը և այլն...

Հիմի գանք հեքիաթների վարիանտներին ու նրանց տարբերություններին:

Ասում է՝ մի մարդու հարցնում են բաղնիք տեսե՞լ ես, թե՞ չէ: Ասում է. տեսել եմ, խոզի նման պոզեր ունի:

[Ուզում է իբրև թե խոզով բաղնիքը բացատրի, դուրս է գալի, որ ոչ էս է հասկանում ինչ բան է, ոչ մյուսը:]

Հիմի սրանն է. ոչ հեքիաթն է հասկանում, ոչ նրա վարիանտն ու վարիանտների տարբերությունը:

Ես ասում եմ՝ էդ հեքիաթը վարիանտներ ունի, մի վարիանտով, որ ես եմ վերցրել (մանրամասնություններն էլ հիշել եմ) հերոսը վերջում դատարկ է նստում, մյուս վարիանտով, որից մեկն է և Հայկունու գրի առածը, հերոսը վերջում հաջողում է, հարսի տեր է դառնում:

Կա և երրորդ վարիանտը, ուր հերոսը խորտակվում է, ինչպես հունականը: Բայց էս թողնենք:

Ի՞նչ էք կարծում, ի՞նչ է <պատասխանում էս> ուսուցիչը.

— Դրա՞նք են որոշում <վարիանտները> հա՛...

Եվ մնում էք ապշած:

Ասում է. «դրանք աննշան, ոչ էական տարբերություններ են» և իրար [ետևից] հետ արտագրում է ու դնում «լինում է չի լինում», «կըլի չըլի» «գնում է, գնում, տեսնում է մի հովիվ», «ասում է՝ նանի» և սրանց նման բոլոր-բոլոր վարիանտներում եղած սովորական դարձվածքներ, որով իբրև թե ապացուցանի կրկին իր ասածը՝ [դա «բառացի» Հայկունու վարիանտն է:

Եվ մարդ չգիտի պնդերեսության վրա զարմանա, թե սոցիտության]

էդ էլ հերիք չի:

Արտագրում է ու [ինձ պատասխանատու համարում] երեսիս բռնում էն տեսակ [կտորների համար] կտորներ, որոնց ոչ տակը, ոչ գլխին չկա իմ անունը: (Թեև էդ

կտորներն էլ հիմի կտեսնենք: «Լուսաբերի» էս կամ էն գրքում տպված է էս ինչ հեքիաթը, էն ինչ առակը. «Պոչատ աղվեսի», «Ագռավի ու պանրի» վրեն չի գրած ժողովրդական կամ թեկուզ հենց Ամիչիսի կտորի դեմ², կտորները բերում դրա համար գրել «գրական մեծությունները բանագող» կամ ինձ շանտաժ, ավերիչ ժանտախտ և բոյկոտ:

էդ ո՞ր գրողի փառքն ավելացավ դրանցով փա՛ռք էն վաստակում և հայավարի արնով էն ընկնում]

Դուք, ասում է, «պարտավոր էիք նաև «Չարի վերջը», «Մուկիկի մահը», «Չախչախ թագավորի» հեքիաթը էլ չի ասում, թե Հայկունուց են, հիշել, որ ժողովրդական են, և այլն: Եվ Հայկունուն ինձ օրինակ բերում, թե նա մինչև անգամ հիշատակում է, թե իրան այս կամ այն առակը, հեքիաթը ով է պատմել որտեղացի է պատմողը և այլն»: [Մրա ասածներում ամենից խելոքն էս և այն է, որ ուրիշները կարծեն թե էլ ուրիշ բան կա]:

[Բայց դուք տեսեք էն, ինչ որ անուն-անուն հիշում է]

[Վարժապետ, դուք ձեր խելոք հողվածում խոսում եք նրա դեմ, թե ինչու եմ ես կազմում զանազան վարիանտներից, որովհետև ասում եք «այդ դեպքում ժողովրդական բանաստեղծության քաղցրությունը, համն ու հոտը կանհետանա, ժողովրդի ստեղծագործությունը կայլանդակվի և որ գլխավորն է, մենք նրա մեջ չենք գտնի ժողովրդի հոգու պատկերը»: Առաջինը, որ մի վարիանտիցն էլ կգնա, շատիցն էլ:

էսքան շատ բան հասկանալուց հետո (որ ինձ շատ է զարմացնում) դուք ինչպե՞ս եք պահանջում, որ իմ [վերապատմածի] հեքիաթի կամ առակի կազմած կամ ոտանավորի վերածած [նյութի] գործի վրա գրեմ «ժողովրդական»:]

Տեր աստված մեզ էլ սրանով է պատժել, որ շարունակ տարրական բաներ ասենք սրան:

Վարժապե՛տ, Հայկունին էլ է լավ արել, էս էլ եմ լավ անում. էն ժողովրդական հում նյութերի համար է, որ գրում են, թե որտեղ են լսել, ով է պատմողը, քանի տարեկան է,

² Այստեղ թերթիկի անկյունը պատռված լինելու պատճառով պակասում է մի պարբերություն:

որովհետև նա պրոտոկոլ է, նրանով ժողովրդագրական, լեզվական, հոգեբանական, պատմական՝ մի խոսքով գիտական, ուսումնասիրություն են անում փոփոխականների, վարիանտների, բառերի, ձևերի, անունների վրա: Իսկ մշակածի, գրական լեզվի վերածածի, կազմածի, ոտանավոր դարձածի ծանրության կենտրոնը [միայն] իր գեղարվեստական արժանիքն է: Մի տեղ խնդիրն էն է, թե ինչ են ասում, իսկ մյուս տեղ, թե ինչպես են ասում: Մի Պուշկին չի գրում, և իսկի նրան չեն էլ հարցնում, թե «Сказка о царе Салтане» կամ «Сказка о рыбаке и рыбке» որտեղից էս վերցրել, կամ որ վրեն չես գրել որտեղից էս առել էդ նյութը, [շանտաժիստի] այլ ասում են՝ տեսնենք [ինչ էս պատմել] գեղարվեստական ի՞նչ արժեք ունի, ի՞նչ էս դուրս բերել, ժողովրդականի համն ու հոտը գնացե՞լ է, թե՞ մնացել:

Ահա տեսնում եք, ես եմ պատմել «Մուկիկի մահը»:

Ասում եք ես պարտավոր էի վրեն նշանակել «ժողովրդական», որ չեմ արել, դրա համար էլ դուք ինձ [անվանում եք ավերիչ ժանտախտ] հայհոյում եք:

Հիմի տեսեք. [առաջինը] գլխին նշանակել եմ [«ժողովրդական»] ով Դրամբյան. բաց արեք «Հասկեր», 1908 թ. № 3, էջ 99 [վրեն] տպած՝ «Մուկիկի մահը», ժողովրդական»: [Բայց միևնույն է] Բայց գուր: Ես ինքս մյուս տարին էդ «Մուկիկի մահը» հանել եմ «Լուսաբերից» ու տեղը դրել «Մի կաթիլ մեղրը»: Ինչո՞ւ, գիտե՞ք, որովհետև անհաջող էր դուրս եկել: Ասե՛ք, խնդրեմ, ես ինչ իրավունքով դրա գլխին դնեի «ժողովրդական» կամ «Չարի վերջի» կամ «Չախչախ թագավորի», թեկուզ հաջողած լինեի: Եթե մի սխալ կա, էդ էն է, որ «ժողովրդական» ենք անվանում, ո՛վ Դրամբյան, մանավանդ երբ «բառիս բուն նշանակությամբ է մշակված», ինչպես դուք եք ասում, ոչ թե էն, որ չենք անվանում, որովհետև իրոք արդեն ժողովրդական չի, ճիշտ ենպես, ինչպես դուք թեև կարող եք մի հայ գյուղից լինել, բայց իրոք այլևս գեղջուկ Դրամբյան չեք, այլ մշակված ու դարձած [նշանավոր] լուրջ կրիտիկոս Դրամբյան:

Բայց ի՞նչ, ասածու ողորմությունը հասել է, որ դուք ծանոթ չեք արևելյան կամ արևմտյան, հունական կամ հելլենական առակախոսներին՝ Եզոպոսին, Գոշին,

Ողիմպիանոսին, Լաֆոնտենին, Վարդանին, Կոիլովին և [սրանց նման] կամ հեքիաթախոսներին, թե չէ գիտե՞ք դրանք ի՛նչ ավերիչ ժանտախտներ են, ի՛նչ շանտաժիստներ են, ի՛նչ բանագողեր. էլ նույն ագռավներն ու նրանց պանիրները նույնությամբ, էլ նույն աղվեսներն ու գայլերը և, լավ միտս ընկավ, նրանց մեջ մի առակ էլ կա՝ «էջն ու սոխակը», [որտեղ], որի մեջ էջը սոխակին սովորեցնում է, թե ինչպես պետք է երգել: [Ով Դրամբյան, աստված եթե ձեզ բերան է տվել նրա համար հո չի տվել, որ էսպես բաներից խոսեք, այլ նրա համար, որ հաց ուտեք] [Բայց Դրամբյանը պատմում է, խրատում է, թե ինչպես պետք է գրել] սակայն] Հայոց Դրամբյանը առանց էդ ասածներին նայելու շարունակում է դատել ու խրատել, թե էդպես չեն գրիլ, այլ էսպես: